Պարոն/Տիկին Ա. Ուլիխանյանին, Հ. Կարապետյանին

ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա.Սաֆարյան

«29» հոկտեմբերի 2024թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա.Սաֆարյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝**
   - Լ. Երեմյան
   - Հ. Սողոյան
   - Գ. Ավետիսյան
   - Հ. Հովհաննիսյան:

2.Զբաղեցրած պաշտոնը - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի

- սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի գլխավոր մասնագետ

- սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ

- սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ

- իրավաբանական և լիցենզավորման վարչության լիցենզավորման բաժնի գլխավոր մասնագետ:

3.Գործուղման վայրը և ժամկետները – ք. Պոդգորիցա (Մոնտենեգրո), 2024 հոկտեմբերի թվականի 21-25-ը.

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում) – ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն (USAID), ԱՄՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային ասոցիացիա (NARUC):

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը) – մասնակցել «Միջին կարիերայի կանանց առաջնորդության ծրագիր» թեմայով երկրորդ մասի դասընթացին:

6.Քննարկված թեմաները (հարցերը) –Դասընթացի առաջին օրը՝ հոկտեմբերի 22-ին ներկայացվել են անձնական բրենդինգի, դրական ինտելեկտի և կարիերայի պլանավորման թեմաները, մասնավորապես մասնակիցների կողմից անհատապես լրացվել և ներկայացվել են կարիերայի պլանավորման և ինքնագնահատման աշխատանքային թերթիկներ, իսկ դրական ինտելեկտի վերաբերյալ քննարկման ընթացքում մասնակիցներին ներկայացվել է մասնագիտական աճի պահպանման համար գործնական ծրագրեր, որից հետո մասնակիցները ներկայացրել են ինքնասաբոտաժի վերաբերյալ իրենց վերաբերմունքը կարիերայի ընացքում: Դասընթացի երկրորդ օրը՝ հոկտեմբերի 23-ին ներկայացվել են հաղորդակցման հմտությունների զարգացման ու կատարելագործման, արտաքին ազդեցությունների դիմադրության և առաջնորդության վերաբերյալ թեմաներ, որից հետո մասնակիցները բաժանվելով խմբերի, կատարել են մի քանի վարժանքներ վերը նշված թեմաներով, ներկայացրել են իրենց անհատական կարծիքները և լրացրել են հարցում, որի հիման վրա բանախոսները վերլուծել են հարցման արդյունքները: Դասընթացի երրորդ օրը՝ հոկտեմբերի 24-ին ներկայացվել են ներառական բյուջեի ստեղծման, ռազմավարական պլանավորման և նախագծերի կառավարման վերաբերյալ թեմաներ, ինչպես նաև բանակցությունների վարման հմտություններ: Մասնակիցները իրականացրել են բյուջեի վերլուծության վարժություններ, իսկ մասնագիտական հաջողության հասնելու համար հաղորդակցվելու և բանակցելու հմտություններ վարելով իրականացրել են խմբային քննարկումներ:

7.Հանդիպումները, ելույթները.– մասնակիցների և բանախոսների հետ դասընթացի ժամանակ տեղի են ունեցել ծավալուն քննարկումներ և հարց ու պատասխան ներկայացված թեմաների վերաբերյալ: Բանախոսները քննարկվող թեմաների վերաբերյալ ներկայացրել են տեղեկատվություն և պրեզենտացիաներ տարբեր երկրների փորձի վերաբերյալ:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը – հետագա համագործակցություն և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID), ԱՄՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային ասոցիացիայի (NARUC) կողմից կազմակերպվող դասընթացներին մասնակցություն:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները- մասնակցելով «Միջին կարիերայի կանանց առաջնորդության ծրագիր» թեմայով դասընթացին, առաջարկում եմ բարձրացնել կանանց ներգրավվածությունը աշխատանքային զբաղվածության և կարիերայի աճի խթանման նպատակով:

Գործուղվող ---------- 29.10.2024 ---------- Լ. Երեմյան
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 29.10.2024թ ---------- Հ. Սողոյան
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 29.10.2024թ. ---------- Գ. Ավետիսյան
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 29.10.2024թ ---------- Հ. Հովհաննիսյան
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 970-ԳՔ, 26.09.2024թ.**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի գլխավոր մասնագետ՝
Լիլիթ Երեմյանին,

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ՝
Հրանուշ Սողոյան,

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ՝
Գայանե Ավետիսյան,

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության լիցենզավորման բաժնի գլխավոր մասնագետ՝
Հասմիկ Հովաննիսյան,

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.**Պոդգորիցա / Մոնտենեգրո /**

5. Գործուղման ժամկետները **21.10.2024-25.10.2024թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Լիլիթ Երեմյան	Հրանուշ Սողոյան	Գայանե Ավետիսյան	Հասմիկ Հովհա-ննիսյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)					-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)					-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	-	-	-	
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)	-	-	-	-	-
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար					
	Մուտքի արտոնագրի վճար					-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)					
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		-	-	-	-	-

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 04.11.2024թ.